

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-ԻՆ
ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

- | | |
|---------------|--|
| Գ. Բեգլարյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարար |
| Տ. Դավթյան | ՀՀ էկոնոմիկայի նախարար |
| Վ. Գաբրիելյան | ՀՀ ֆինանսների նախարար |
| Հ. Թովմասյան | ՀՀ արդարադատության նախարար |
| Ե. Զախարյան | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ |
| Կ. Մինասյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ |
| Հ. Բեգլարյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ |
| Ն. Երիցյան | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ |
| Ա. Հովսեփյան | «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումա-
յին ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-
ի գործադիր տնօրեն |
| Ա. Բադալյան | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի
իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրա-
յին կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղե-
կավար |

Հրավիրվածներ՝

- | | |
|--------------|--------------------------------------|
| Հ. Մարգարյան | ՀՀ ԱԺ-ի պատգամավոր |
| Դ. Սարգսյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար |
| Կ. Արեյան | Երևանի քաղաքապետի տեղակալ |

Ա. Բախշյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Դ. Դոուլ	Ասիական զարգացման բանկի Հայաստանյան առաքելության ղեկավար
Գ. Մուսայելյան	Ասիական զարգացման բանկի ծրագրի ղեկավար
Ք. Ղալեչյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր իրավախորհրդատու
Հ. Սարգսյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ինֆորմացիոն տեխնոլոգիաների մասնագետ
Լ. Վարդանյան	թարգմանչուհի

1. Կառավարման խորհրդի 26.11.2012թ. նիստով տրված (արձանագրություն N23.6/[137616]-12) հանձնարարականների կատարման վերաբերյալ

(Ա. Հովսեփյան, Հ. Բեգլարյան, Ն. Երիցյան, Գ. Բեգլարյան, Հ. Թովմասյան, Կ. Արեյան, Հ.Մարգարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ փորձագետների հետ քննարկել արագընթաց ճանապարհի վրա գովազդային վահանակների տեղադրումն արգելելու հարցը՝ անհրաժեշտության դեպքում նախագծում սահմանելով դրանց տեղադրումն արգելող համապատասխան նորմեր.

2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ Հ. Բեգլարյանին՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և քաղաքային զարգացման ներդրումային ծրագրերի կառավարման խորհրդի նիստերի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի

նախագահի տեղակալ Ն. Երիցյանի կողմից ներկայացված առաջարկությունների հետագա քննարկման արդյունքները գրավոր ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանին.

3) Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման պատասխանատու ճանաչել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին.

4) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ սահմանել անմիջական հսկողություն՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների պատշաճ կատարման նկատմամբ.

5) ընդունել ի գիտություն, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում կառուցվող արագընթաց ճանապարհի տեխնիկական լուծումները երաշխավորված են և համապատասխանում են միջազգային նորմերին, որի արդյունքում ՀՀ-ն կունենա ժամանակակից արագընթաց ճանապարհ (100կմ/ժ արագությամբ ընթանալու համար):

2. Տրանշ-2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) իրականացման ընթացքի վերաբերյալ

(Ա. Հովսեփյան, Վ. Գաբրիելյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանի Տրանշ-2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) իրականացման ընթացքի վերաբերյալ գեկույցը:

3. Տրանշ 1-ի, Տրանշ 2-ի և Տրանշ 3-ի նախագծող խորհրդատուի՝ «ԷջիսԲիսիոն» կազմակերպության կողմից պայմանագրի փոփոխության կարգադրագրի ընդունման վերաբերյալ

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հավանություն տալ Տրանշ 1-ի, Տրանշ 2-ի և Տրանշ 3-ի նախագծող խորհրդատուի «ԷջիսԲիսիոն» կազմակերպության կողմից պայմանագրի փոփոխության կարգադրագրի ընդունման առաջարկին:

4. WGS համաշխարհային գեոդեզիական կոորդինատային 2-րդ դասի ցանցերի ստեղծման վերաբերյալ

(Ե. Զախարյան, Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի շրջանակներում փոխհատուցման համար նախատեսված միջոցների հաշվին նախատեսել 18 գեոդեզիական և 2 նիվելիրացման հիմնակետերի վերակառուցման աշխատանքների իրականացում:

Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ Հ Ա Ր Ց

5. Տրանշ 3-ի շրջանակներում սոցիալական զարգացման և վերաբնակեցման միջազգային խորհրդատուի ընտրության մրցույթի արդյունքները հաստատելու վերաբերյալ

(Ա. Հովսեփյան, Վ. Գաբրիելյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ պայմանագրի նախահաշիվը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն.

2) հաստատել Տրանշ 3-ի շրջանակներում Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) սոցիալական զարգացման և վերաբնակեցման անհատական միջազգային խորհրդատուի ընտրության արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ (ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՆՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ